

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պոստոյ հար 3 ՄԷՃ
Չ Գաւառաց 10 ՄԷՃ
Վերադարձայ և Պոստոյ 4 ՄԷՃ
Չ Գաւառաց 5 ՄԷՃ
Բարձրագոյն թերթի գին 60 փրկ
Հանուցման տոգը մէկ անգամի հաւ
ճար 3 դուրուշ, երկու անգամի հաւ
ճար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ ասկարկութիւն կը լլայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 51 ՕԳՈՍՏՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Մատրիտ 9 սեպտ.

Քարտեանք շոգեկաւքի մը վրայ հը-
րադէն պարսկերէն կարծելով թէ Գեր-
մանիոյ և Սաւորիոյ ղեկավարներն անոր
մէջ են: Մերքենավարն ու ընտելիչը
զարնուելով մեռան:

Լազէրնա զորավարը Հիւսիսային
դուրաց հրամանատար անուանեցաւ:

Մատրիտ 10 սեպտ.

Հաճախայն եկած լուրերը կը ծանու-
ցան թէ Կապուստապուս զուրկ ըլլա-
նուեր է:

Քարտեանք շիրուցան եղան: Լո-
ւս—Բիւթո զորավարը Մոզա քաղաքն ա-
ռաւ: Բալիա զորավարն ալ Ալքանէզ
մտաւ:

Մատրիտ 10 սեպտ.

Սապար զորավարին հրամանարու-
թեան ներքե զանուղ 6000 Քարտե-
անք չարաչար յաղթուեցան:

Պէրլին 10 սեպտ.

Կառավարութեան նպատակաւ թեր-
թերը կուէթարիսի գէպը դոցուած կը
համարին: Սպարիոյ ծովերը զրկուած զեր-
մանական նաւախուրդ զորացնելու զը-
րոյցը սխալ է:

Լոնտոն 10 սեպտ.

Օտ. Բոնա. 44 3/4
Փոս. 1865—
» 1869 56 3/4
» 1871 66 3/8
» 1872 81 3/4
Աղ. Բոնա. 92 3/4
Օտ. նոր փոխառութիւն 53 7/16
Լիվէրքուլ 8 սեպտ.
Բամպակ Միտլինկ—Օրէան 8 1/4—
» Ֆար Տօլէրան 5 1/8—1/4
Կախուած 10000 հալ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական կառավարութիւնը
յատուկ յանձնաժողով մը կազմեց
Լիվա ֆայիդ փաշայի նախագահու-
թեամբ, որպէս զի փոքր Սիւրի սովա-
րակ դաւառներն երթալով սովին
գործած ֆուսուսը ընդարձակու-
թիւնը հասկնան և դարմանելու հա-
մար հարկ եղած միջոցները տնօրի-
նեն:

Կըսուի թէ յառաջիկայ տմէն
սկսեալ ծխախոտի Բէժին գիները
պիտի իջնան: Արդէն օրան 40 զըշնոց
ծխախոտն 30ի իջուց:

Չորեքշաբթի օրը Պանարմայէն ա-
հադին հրդեհին մը դոյժ հասաւ, որ
իշխալ քաղաքը գրեթէ ամբողջա-
պէս մոխիր դարձուցեր է:

Ահաւաստիկ այս աղետալի դէպքին

վրայ եկած տեղեկութիւնը:

Հրդեհը կիրակի իրիկուն սկսաւ
Հայոց եկեղեցւոյն մօտ փայտաշէն
տունէ մը, և հովին ու ժողովութենէն
անմիջապէս ծաւալելով մինչև հետե-
ւալ երկուշաբթի առաւօտ աւերմուն-
քը շարունակեց անարգել, վասն զի
ոչ ջուր կար և ոչ ջրհան: 1500ի չափ
տուն, 500ի չափ խանութ, Հայոց և
Յունաց եկեղեցիները, երեք դպրոց,
6 խան, 2 մզկիթ, Կառավարութեան
պալատները, քուռանթիկայի դրա-
տունը, մարտատունը, և այլ հասա-
րակային շէնքեր, մոխիր դարձան,
և միայն 189 տուն մնացին, որոց 132ը
տաճիկ, 45ը հայոց և 12ը յունաց:
Կայսերական կառավարութիւնն
այս աղետալի դէպքն իմանալուն պէս,
չորեքշաբթի իրիկուն յատուկ շոգե-
նաւով վրաններ և նպար զրկեց Պան-
արմա, որպէս զի թշուառ հրկիզելոց
բաշխեն:

Ասկէք քանի մը չարաթ առաջ Ան-
տօնեան միաբանութենէն Հայ կաթո-
լիկ վարդապետ մը՝ Հ. Յովնէի ու-
ղունեան նոյն Միաբանութենէն Բան-
կաթի թաղը բնակեալ Զօհրապետն
Հ. Անտօնի քրոջ աղջկին առեւանդե-
ր անյայտ եղեր էր: Հիմա կըսուի թէ
վարդապետն ու օրիորդը Պէրլին հա-
սեր, բողբոջական երէցի մը ձեռք
պիտի պատկուին եղեր:

Մէհմուայը Մէարիֆ քրդերը կը
ծանուցանէ թէ Եպոլմայի մօտակայ
անտառն եօթն ու յոթ օրէ ի վեր կայրի:

Կը լսենք թէ հինգշաբթի իրի-
կուն Չամաշլուեան Պ. Յարութիւնի
տաղարանը ոտիկանութեան կողմէ
դոցուեր է անպայման կերպիւ:

Շիրքէթի խայրիէի տնօրէնութիւն-
ն իր շոգենաւազ հրամանատարներուն
պարտականութիւնները ճշդելու հա-
մար նոր կանոնադրութիւն մը շինեց,
խիստ մանրամասն հրահանգներով:

Բոսփորի մէջ երթեւեկելու հա-
մար հետեւելիք ճանրանները, նաւա-
մատոյցներու և կամուրջին մօտեցա-
լու համար ընելիք գործողութիւն-
ները, իրարու չբաղեւելու համար
պէտք եղած ամենամեծ զգուշու-
թիւնները, մէկ խօսքով վտանգէ և
ֆիտաները ազատ մնալու համար հարկ
եղած ամեն միջոցներն ու պայման-
ները նշանակուած են, որոց ամենա-
փոքր զանցառութենէն պատճառ-
եալ արկածից և ֆիտառուց նաւապե-
տը պատասխանատու բռնուած է:

Նմանապէս շոգենաւին մարքու-
թեան ու մեքենաներուն բարեօր-
վիճակի մէջ դանդաղեցնելու հանապա-
զօրեայ հսկողութիւնը նաւապետին
վրայ է:

18րդ յօդուածը կը պատուիրէ
որ հարաւային հովի և մերկայից օդի

ժամանակ նաւապետներն արտաքոյ
կարգի ուղեւորութիւններ պիտի ը-
նեն իւսկիւտար, և հրդեհ մը պա-
տահած ժամանակ ալ Բոսփորի մէջ՝
տնօրէնութեան կամ կամուրջի Մէ-
մուրներուն հրամանաւ:

Ուրիշ յօդուած մ'ալ կը պատ-
ւիրէ որ կայսերական պալատներու
առջեւ անցած ժամանակ բացէն պի-
տի երթան, այսինքն զրահաւոր նա-
ւերուն ետեւէն, և նոյն միջոցին ա-
ծուի չպիտի նետեն շոգենաւին վա-
ռարանը, որպէս զի մոխիրը պալատ-
ներուն վրայ չերթան:

Այս հրահանգներուն հետ չենք
գիտեր թէ ժողովրդեան հանգստու-
թեանն ու գիւրութեանը վերաբեր-
եալ հրահանգներ ալ կ'ան. օրինակի
համար պատուէր արուած է շոգե-
նաւի գործակալաց որ ժողովրդեան
հետ մարդապարութեամբ վարուին,
պատուէր արուած է որ շոգենաւ-
ներուն մէջ ժողովրդեան մէկ մասը
ոտքի վրայ մնացած ժամանակ՝ ու-
րիշներ ալ նստարաններու վրայ ա-
թուակ դրած ջնոյն, մանաւանդ
պատուէր արուած է նաւապետաց,
որ Բոսփորի նաւամատոյցներն հա-
ղիպած ու մեկնած ժամանակին նոյն
նաւամատոյցներուն վրայ կախուած
ժամացուցակին համաձայնին, և 5—
10 վայրկեան առաջ չը մեկնին:

Փոխաբերի է որ Շիրքէթի խայ-
րիէի նոր տնօրէնութիւնն այս և ու-
րիշ ասոր նման պահապանութիւններն
ալ նկատողութեան առնելով ուղղելու
հոգ տանի ի գոհութիւն հասարա-
կութեան:

Անցեալ շաբթու Բերայի Բաղա-
քապետութեան չափաւորներէն երեքը
Տէլի Սիւլէյման, Ահմէտ և Բիզա,
Թօփհանէի Գազանճը Մահալլէի թա-
ղը բնակեալ Օսման անուն մէկու մը
կինը գիշերանց վերցնելու խորհուրդ-
ընելով, կերթան դուռը կը կոտրեն:
Օսման՝ երեք զինեալ մարդոց դէմ
չկարենալով մաքառել, թոյլ կուտայ
որ կինը կը վերցնեն կը տանին, բայց
անմիջապէս կերթայ մօտակայ պա-
հականոցը կիմացնէ, և զինուորներն
առեւանդողաց ետեւէն իջնալով, կը
հասնին երկուքը կը բռնեն, և կինն
էրկանը յանձնելով՝ չարագործները
Ղալաթի մէջ Երայի ոստիկանութեան
բանար կը տանին:

Չորեքշաբթի գիշեր Բերա Տոք-
թոր Մուհմէթի տունը գող մտնե-
լով 60—70 կտոր սեղանի արծաթ ըս-
պառ վերցնցին:

Նոյն գիշերը դարձեալ Բերայի
մէջ Մէրիքմէթեան տունը երկու
գող մտան, բայց մին բռնուեցաւ:

Կըսուի թէ Օսմանեան Քարա շո-
գենաւին ծովասօղ ըլլալուն պատ-

ճառաւ Խալիֆէի Պէհէրա շոգենաւին
դէմ բացուած դատը՝ վիճ. Սել-
թանին հրամանաւ դոցուեր, և Պէ-
հէրա շոգենաւը՝ որ Սիւլէյմէն ընկե-
րութեան խնդրանք վար դրուած
էր, թող տրուեր է:

Վարնայի ճանրով մայրաքաղա-
քէս մեկնող անգղիական բօսթան
այսուհետեւ երեքշաբթի և ուրբաթ
օրերը կէս օրէն երեք ժամ ետքը
պիտի մեկնի:

Այս շաբթու Մէտինիէթ անու-
նով թուրքերէն ամենօրեայ նոր
թերթ մը հրատարակիլ սկսաւ, որոյ
մեծութիւնը մայրաքաղաքիս ամեն
թերթերէն կը գերազանցէ, և գինն
ալ 20 փարա է:

Կըսուի թէ առաջին եղած օրը
6000 հաս լաճառուեր է:

Տաճկաց թաղերու և տուներու
մէջ քրիստոնէից բնակութիւնը նա-
րէն արգելուելով, չորեքշաբթի օրը
Բէրայի շրջակայ տաճկաբնակ փողոց-
ներուն իմամներն ու Մքաւրները
Եւրոպացիներէ վարձեալ տաճկական
տուններու բնակչաց երեք օր պայ-
մանաժամ տուին ուրիշ տեղ փո-
խադրուելու: Ոմանք ալ առանց պայ-
մանաժամ տալու ոտիկայիցն որ ան-
միջապէս ելնեն, հետեւաբար կըսուի
թէ տեղ տեղ Եւրոպացաց կարասի-
ներն ալ ընտանիքները բռնութեամբ
գուրա ձգուեր են:

Երկուշաբթի իրիկուն երկու խոր-
վաթ Պէյլէրպէյի պարտէզ մը մրտ-
նելով դեղձ դողած ժամանակ,
պահապանը վրայ կուգայ և երկու
խորվաթները խափալ կը կշտաճէ:
Ասոր վրայ խորվաթներէն մին բար-
կանալով սուրը կը քաշէ և պող ար-
իւնով պահապանին գլուխը կը կշտ-
րէ:

Յիշեալ բարբարոս խորվաթը ոս-

տիկանութեան ձեռքն ինկած է:
Մայրաքաղաքիս թուրքերէն թե-
րագի լրագիրն և անկից առնելով
ուրիշ քանի մը լրագիրք ալ լուր տը-
ուած էին թէ Մայրաքաղաքի դուռը
Բարձր, Եւսուֆ Իզդէատին Էֆեն-
տիի սենեակը գող մտեր, ծան-
րագին աշտանակներ և գրական
նիւթեր պարունակող ախոյ մը գող-
ցեր է, և այլն:

Այս լուրն անհիմն ըլլալով՝ թե-
րագի լրագիրը Բ. Գրան հրամա-
նաւ խափանեցաւ:

Հինգշաբթի առաւօտ Սիմիթի
մը Շիրքէթի շոգենաւներուն մէկէն
ծափ ինկաւ խնդուեցաւ:

Նոյն իրիկունն ուրիշ աղետալ դէպք
մը պատահեցաւ Գարաղ եղի կամըր-

Ջին քով, ի ներկայութեան հարկաւոր անձանց, որոց մէջ չգտնուեցաւ քաջասիրտ մարդ մը որ խեղճ տղու մ'օգնութիւն ընէր:

Օսմանցի դնդաւար մը՝ 14—15 տարեկան տղայ մ'եռեւէն Հայտար փաշայի շոգենաւը մտած ժամանակ՝ տղուն ոտքը սահելով ծոփն ինկաւ: Խեղճ տղան լողալ չէր գիտեր, բայց և այնպէս մեծ ճիգ թափեց ինքզինք ազատելու: Բաւական էր պահանք մը նետել կամ կեռ մ'երկնցընել, և կամ որ և է օգնութիւն մ'ընել: Բայց մէկն ալ չեղաւ, և դեժ քաղաք տղան վերջապէս ծովուն յատակն իջաւ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
ԵՍԶԱՄԱՐ ՈՒՄՈՒՄԻԷ	
30 օգոստոս ուրբաթ իրիկուն	49, 4
31 օգոստոս չաբաթ առաւօտ	— —
Բացուեցաւ	
կէս օր	
Կ. Պօլիս 30 օգոստոս	
Ստիւտէն Ժէնէրայի բաժինը Անդրէյի	7 5
« Փոխանակութեան »	4 20
Կ. Պօլսոյ Պանքային »	5
Քրէտի ժէնէրայ »	9.32
Քրէտի Օսթրո-Սերբ	— —
Կրկնաթուղեաց հին նոր	Յր. 113 3/4
Փոխ. 1863	» 332
» 1865	» 334
» 1869	» 282
» 1872	» 81 1/2
» 1873	» 265
Թրամուշ 0-մ. լիւր	5 25
ԲՆԹԱՅՔ ԴՐԱՄՈՑ	
30 ՕԳՈՍՏՈՍ	
Անգղ. Կեռ զարուշ	109, 8
Նաւթի օսկի »	87 8
Նաւթի օսկի Ռուս »	89 45
Դ. քրմից »	51, 24
Լինդ ֆրանք »	—
Հինգից »	404 25
Պոլսի »	427 20

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆԻՐ

Սահմանադրութեան դործադրութիւնն երբեք այնչափ արտադրութեանց հանգիստ չէր, որչափ վերջին ժամանակներս, և այն ալ նոյն խիստ այն անձանց ձեռքը՝ որք Սահմանադրութեան տառին չհրմ պաշտպան ձեռնալով, տառն ու հոգին միանգամայն սպաննելու խիղճ չեն ընել՝ իրենց շահն ու կիրքը դոհացնելու համար:

Եթէ մէկը տարիէ մ'ի վեր անցած անցքերն աչքի առնէ, բերէ, եթէ կատարուած երեսփոխանական ու վարչական ընտրութիւնները նըկատէ, եթէ խաղաղաւոր խաղերուն ու մեքենայութեանց խորրը քննէ, անմիջապէս կը համարուի թէ Սահմանադրութիւնը պարզապէս կրկն և շահու գործիք եղած է այդ անձանց ձեռքը:

Այդ անձինք՝ կեղծ Սահմանադրութեան ձեռքը և սուտ ժողովրդականութեամբ ժողովրդեան միամիտ մտքը խաբելով՝ ազգային պաշտօնները ձեռք անցունելէ ետեւ, խել մ'իւրենց դադարաւորակից մարդիկ ազգային պաշտօններու վրայ դնելով իրենց ամեն ուզածը յառաջ տարին և դեռ կը տանին ամեն միջոցներով: Այդ անձինք՝ մայրաքաղաքիս թաղերուն մէջ ալ ձեռք ունենալով, ուղած մարդիկն են երեսփոխան կամ փառական խորհրդոյ անդամ ընտրել կուտան այլ և այլ ապօրինի միջոցներով:

Հեռեւեալ բողոքոյ նամակն՝ որ Պէշիկթաշէն բաղմոթիւ ստորագրուած մեր այս բաժնի նոր և ակներեւ ապայոյց մէջ:

Ամենապատիւ Սահմանադրութեան շարժարար Ազգային Կեդր. Վարչութեան:

Ստորագրեալ թաղեցիքս Պէշիկթաշի որ ըստ Սահմանադրութեան ընտրութեան պայման եղող 75 զրէ ազգային ընդհանրութեան մասնակցելու օրինական իրաւունքն ունիմք, մեր այս արգար իրաւունքն օտնակոխ եղած և Սահմանադրութեան մէկ հիմնական տրամադրութիւնը բռնաբարութեամբ տեսնելով, պարտաւարութեամբ եմք՝ յանուն օրինաց՝ բողոքել առ վարչական պատկառելի տեսանք, և այս բռնաբարութեան դարմանը խնդրել:

Մինչդեռ թաղիս մէջ հազիւ հարիւր հոգի կըլէ 75 զրէ տուրք վճարող 350 չափ ընտրողաց ցանկ մը կ'ախուսած տեսանք անցեալ չաբաթ թաղիս եկեղեցւոյն բակը՝ ցանկ մը, որուն մէջ նշանակեալ անձանց երեք չորրորդէն աւելին բնաւ ուղեւորներու վճարած չեն և վրձար. իրել չունին, բայց և այնպէս քուէարկութեան մասնակցելով և հարկաւ մեծամասնութիւն կազմելով, բուն իրաւունք տէրերուն ձայնը կը խեղդեն, ինչպէս որ անցեալ չաբաթ մարմնով տեսնուեցաւ թաղիս մէջ կատարուած երեսփոխանական ընտրութեան մը առթիւ:

Այսպիսի հիմնական ապօրինութեան մը դէմ, որ Սահմանադրութեան 65-րդ յօդուածին տրամադրութեան բացարձակապէս հակառակ է, թողլով ուրիշ ապօրինութիւնները՝ զորս կը լսենք, այն է անչափաւոր անձանց և պարզութեան թու քուէարկութեան մասնակցելը, 20—30 քուէ մէկ երկու անձանց ձեռք բերելը, և մէկ զրով զրուած ըլլալը, և այլն, ստորագրեալ թաղեցիքս բողոքելով՝ օրինաց ճշդիւ դործադրութիւնը կը խնդրենք պատկառելի վարչութեանէ: Այն է՝ կատարուած ապօրինի ընտրութեան ոչնչացումը, թաղիս երեսփոխանական ընտրողաց ցանկին սրբազրութիւնը, և 75 զրէ տարեկան Ազգ. ընդհանուր տուրք վճարող թաղեցւոյ միայն մասնակցութեամբ քուէարկութեան ըստ օրինի կատարումը:

Անեղբայր ըլլալով՝ որ ստորագրելոցս Սահմանադրական արդար բողոքը նըկատուութեան արժանի կը դառուի պատկառելի վարչութեանէ:

Մնաք Ամենապատիւ Ս. Հօրդ. ամենախոնարհ և ամենահազաւք օրդք 11 օգոստ. 1874 Պէշիկթաշ

(Պարագրաֆ 1-էն)

Ինչպէս որ կը տեսնուի, այս բողոքը խիստ ծանր է, Սահմանադրութեան հիմնական սկզբանց միոյն՝ այն է իրաւունք և պարտեաց սկզբան բռնաբարութեանը դէմ է, որոյ առջեւ անհնար է անտարբեր կենալ:

Իրաւունք բռնաբարութիւնը պարտուց զլացում յառաջ կը բերէ բնականաբար. և լաւ ծնունդ նայելով՝ արդէն Պէշիկթաշի ընտրողներէն շատեր՝ իրենցմէ պահանջուած ուղեւորներու տուրքը զլանալ սկսելու են վերոյիշեալ ապօրինութեանց պատճառաւ: Եթէ այս զլացումն ընդհանրանայ, տխուր հետեւները դիւրին է դուշակել:

Կըրուանք որ վարչութիւնը կը փութայ դարմանել այս անեղբայր ապօրինութիւնները:

Հեռեւեալ նամակին վրայ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և Կրօնական պատկառելի ժողովոյ ուղարկութիւնը կը հրաւիրենք:

Ազգային վարչութեան անդամ մը, իր պաշտօնական աթոռին վրայ, բարձրաստիճան եկեղեցականի մը դէմ հայհոյելէ զատ, հրապարակի մէջ ալ նոյն և ուրիշ եկեղեցականի մը հաւատքին օրէնքին կը հայհոյէ, այն հաւատքին և օրէնքին, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսէն սկսեալ մինչև յետին Հայուն հաւատքն և օրէնքն է: Այսպիսի յանդիմանութիւն մը ո՛ր և է մարդու ներքին չեղած ժա-

մանակ, ազգային պաշտօնէի մը, վարչական խորհրդոյ անդամի մը կրնայ երբեք ներքին ըլլալ: Ամեն Հայ կը բաղաւքէ ասոր դէմ, և քննութիւն ու դատաւորան կը պահանջէ:

... Խմբագիր:

Վէլիւր խանի օտարաշի Տիէեան Մարտիրոս աղան, որ Ազգ. Տնտեսական խորհրդոյ և Ղարաթիոյ Ռադ. խորհրդին անդամ է, ասկէ երկու շաբաթի չափ յառաջ Նէնի Կէշիտ խանը նստած՝ մի քանի անձանց հետ տեսնուելու միջոցին Ամեն. խորհրդին համար ծանր հայհոյանք և պիղծ խօսքեր կը տեղադրէ իւր խօսակցներէն մին դարձաւ իրեն ըսաւ թէ «Բաւ պաշտպանած Սմբատիւնը շատ աղէկ մարդ մ'է»: Մարտիրոս աղային ասոր տուած պատասխանը այնպիսի տարաւորութիւն մ'ըրաւ իմ վրայ որ տակաւին քառմեկով կը յիշեմ զայն: «Ամբարկոսի ալ միւսին ալ հաւատքը օրէնքը, ... » ըսաւ, Եւ երբ ուրիշ խօսակցի մը դիտողութիւն ըրաւ թէ «տունց հաւատքը օրէնքը ամենուս ալ է, ի՞նչպէս կը համարձակիս հայհոյել», աւելի տարաւորութեամբ պատասխանեց յիշեալ անձը թէ «Օրէնքը ըսածդ ի՞նչ է, «Թանգիմիսթ» մ'է. ի՞նչ կընէ ասկից» եւ ... անցուցեր եւ հաւատքին օրէնքին մէջը, «Այս լսելով առաւ քաղց:

Եւ թէպէտ այն օրը բողոքին ի ցաւ և ի դայոյթ շարժեցայ, սակայն լսելը խոհեմութիւն համարեցի այս պարագայիս մէջ, բայց երբ երեքշաբթի առաւ 9 Թիւ Ասիայի մէջ կարգացի թէ յիշեալ անձը Տնտեսական խորհրդոյ մէջ ալ յանդիման է հայհոյել բարձրաստիճան եկեղեցականի մը դէմ, հարկ համարեցի այն իրողութիւնն ալ հրապարակ հանելով, Կրօնական ժողովոյ ուղարկութիւնը հրաւիրել այդ պաշտօնական անձին վրայ: Երբ որ Կրօն. ժողովը իւր պաշտօնական ազգարարութիւնը նախ պաշտօնական շրջանին մէջ դործադրել ուղեւոր, բարեհաճի քննութեան տեսնուի այս դործը, պատրաստ եմ ներկայանալու և ըսածին հաստատութեան համար ալ քաղց եղած վկայութիւնները տալու:

Խնդրեմ, ... Խմբագիր, որ ներկայս հրատարակելով՝ բարեհաճեք Պատկառելի Կրօն. ժողովին ուղարկութիւնը հրաւիրել այն իրողութեան վրայ: 1874 օգոստ. 30

Ի. Կ. Պօլիս

Յուսէ Լաւրէնտ

Խալիկաթար, 28 օգոստ. 1874 ... Խմբագիր Մասիս աղա օգոստ

Թերեւս բաղմոթիւն լրացողը ընթերցողներէն շատերը տակաւին կը յիշեն «Եկեղեցւոյ պաշտօնէից ընտրութիւն» վերնագրով Մասիսի 1500 և 1504 թիւերուն մէջ հրատարակուած յօդուածը: Նոյն յօդուածին հրատարակութեան ի վեր կ'ապասխանէ որ Կրօնական ժողովն այս ամենակարեւոր խնդիրը նկատուութեան առնելով՝ այսուհետեւ հոգեւորական պաշտօնին պահանջած հանգամանքները չօրհնելու անձանց եկեղեցւոյ պաշտօնեաց ընտրուելը արգելել և այսպէս շատ ժամանակէ ի վեր եկեղեցւոյ մէջ մտած այս սխառնքն ուղղուէր:

Յաւ ի սիրտ կըսենք որ Կրօնական ժողովն այս մասին բողոքովն անտարբեր կեցաւ, և այս խնդրոյն երբեք կարեւորութիւն չտալն անցեալները քանի մը թաղերու կողմանէ անպատեհ կերպով ընտրուած և իրեն ներկայացուած անձինքը

* Արդարութեան պարզող մը կը համարենք զիտեղ տալ Յարգող նամակագրին թէ Կրօնական ժողովն այս խնդիրը նըկատուութեան առած է, ինչպէս որ կը տեսնուի երեքշաբթի առաւ Մասիսի մէջ հրատարակուած օրոյնանց ցանկին, զոր յարգող նամակագիրը դուցէ չէ տեսած: Կը մնայ միայն տեսնել թէ Կրօնական ժողովը ըրած զովքին որչափ մը դործականապէս արդիւնք տրեւի ունենալ:

Կտն. Խմբ.

քահանայ ձեռնադրուելու հրաման տալովը հաստատեց: Հիմա ալ կը լսենք որ թաղական խորհուրդ մը Կր. թաղին եկեղեցւոյ լուսարարը քահանայ ձեռնադրել տալու համար ստորագրութիւն կը հաւաքէ: Չորրոնք չէ, երբ այս մարդուն ալ քահանայ ձեռնադրուելը լսելու ըլլանք:

Այս առթիւ կը խնդրենք Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօրմէն որ բարեհաճի իւր ուղարկութիւնն այս ծանր և փափուկ խնդրոյն վրայ դարձնել: Երբեք չենք կրնար հաւատալ որ հոգեւորական պաշտօնի պաշտօններն պարտաւորութիւնները կատարելապէս ճանչցող և Պատրիարքական ամենածանր պաշտօնը փարող եպիսկոպոս մը՝ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ յարատեւող այս անպատեհ ընտրութիւնն անտարբեր աչքը նկատէ:

Խնդրեմ, Մեծապատիւ Խմբագիր, որ ներկայս ձեր ընտիր լրացրին մէջ հըրաւորակի բարեհաճեք, որով մնամ միշտ շնորհապարտ ձերք: Մեծապատեւութեան և անձնուէր բարեկամ

Յ. Մ. ԳՈՐԻՍԷԼՆԱՆ

Տիւրքիոյ Մեղու Հայաստանի շաբաթաթերթին օգոստոս 10 թուոյն մէջ հետեւեալ խորհրդածութիւնը կը կարգանք ազգային երեսփոխանական ժողովոյ ներկայ վիճակին վրայ:

Անցեալ յուլիսի 31-ին Կ. Պօլսոյ երեսփոխանական ժողովը նիստ է ունեցել, որ կրկին ապացոյց կարելի է համարել նորա անկարողութեան և ազգի ներկայացուցչութեան անյարմար լինելուն: Նիստը շատ փոթորկալից եղել է, և հասել է դործը կռուի և ծեծի՝ ներկայ եղող բազմութեան մէջ, այնպէս որ օստիկանութեան զինուորները ստիպուել են խառնվել դործին և շատերը կռուողներին ու ծեծողներին բանտարկվել են: Ի՞նչ օգուտ, սրանով խաղաղութիւն և կարգ չէ կարող վերականգնելու: Պատճառն այս անկարգութեան եղել է մեծ. Պ. Ս. փափագեանի երեսփոխանական ժողովի աւտենագրի ընտրվելն, որոյ մասին ժողովրդեան կողմից բողոք է եղել արված, բայց անուշադիր մնացած: Բողոքատու բազմութիւնը պահանջել է, որ ընթացք տրվի իւր բողոքին. և բաւարարութիւն չը գտնուելով, չը նայելով Սրբազան Պատրիարք Հօր յորդորանայ և ստաման, տղամուկ է բարձրացրել, ցանկալով Ս. փափագեանի հեռանալը ժողովից, իրաւ է, ոտիկանութիւնը դուցէ բանտարկել է ոմանց, ժողովն էլ Ս. Պատրիարքի ստիպողական պահանջմամբ շարունակել է իւր դործն, ընտրելով կրօնական ժողովի անդամներ, բայց սուք մի թէ երաշխաւոր կարող են լինիլ, որ ապագայում ազգային երեսփոխանական ժողովը կանոնաւոր ընթացք կունենայ և կարող կը լինի վերականգնել իւր նշանակութիւնն, յարգն և ազգեցութիւնը: Սրբազան Պատրիարք Հայրը հաշտեցրեց այն անձանց, որոնք իրեն թէ զանազան կուսակցութեանց առաջնորդներ էին երեսփոխանական ժողովի մէջ, և աւելորդ վիճարկանութեանց առաջն տեսնու համար, որոնց իւր մօտ առանձին ժողովներ կազմուելու այն անձինքներ, որոնք դիմաւոր խօսողներն են երեսփոխանական ժողովի մէջ, որ սուք աւտաւոր երեսփոխանական ժողովի նախնիքները վիճաբանէին դիմաւոր խնդիրներին վերայ և ապա համաձայնութեան հասնելից յետ մտնէին ժողով: Ի՞նչ հետեւեալ ունեցաւ այս, արդեօք տրակաւեցա՞ն

* Բանտարկութիւն եղած չէ: Նրան խմբ.

